


16767



1920

ԳԱԼՅԱՆԵԱՆ  
ԱՂՋՎԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ

ԽԱ.ՄԳԻՒԴ.



ՎԵՑԱՄԵԱՅ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1914-1919

ԿՈԶ ՄՔ

ՏՊԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Կ. ՔԵՐԵՇԵԱՆ ՈՐԴԻՒ  
Ա. ՊԱԼԻ, Խ. ՊԱԼԻ

362  
4 - 23

2010

362  
4-23

(349)


ԳԱԼՖԱՆԵՍՆ  
ԱՂՋԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ  
ԽԱՍԳԻՒՂ



ՎԵՑԱՄԵԱՅ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1914-1919

ԿՈԶ ՄԸ



ՏՊԱԳՐ. Կ. ՔԵՇԻՆԵԱՆ ՈՐԴԻ

Կ. ՊՈԼԻՍ

1920

2002

### Մեր համակիրներուն

Ոսկեղջիւրի խորը , Խասդիւղի անհետացած ամիրառութեան յիշատակ աւերակներուն մէջ բոյն գրած , յիսուն և չորս տարիներէ ի վեր տպրող աննման կողջ մը՝ Գալֆաեան Սրբուհի Մայրապետի յիշատակը եղող Գալֆաեան Աղջկանց Որբանոցին համար ալ՝ պատերազմի հինգ տարիները , ինչպէս ամէն Հայ անհատի կամ հաստառութեան համար , տագնապի շրջան մը եղաւ :

1866ի Պոլսոյ ժամանակախին հետեւանօք իր շուրջը տեսած թշուառութենէն ազգուած կին մը , Սրբուհի Արքանութին մէ , որոնց մէջ զգացման աղնուութիւնը ու գործունէութեան աշխայքը գիրար կը գերազանցեն ու կ'ամբողջացնեն , միսիայն ինքն իր միջայներուն վրայ վստահելով , 15—20 որբուկներ կը ժողվէ իր շուրջը . կէս ամայացած Խասդիւղի մէկ անկիւնը , ու այսպէսով կը հիմնուի այսօրուան Գալֆաեան Որբանոցը :

1989 ին Սրբուհի Մայրապետի մահուընէն երկար տարիներէ վերջ՝ անկումի շրջանէ մը յետոյ , 1902 ը Որբանոցիս վերածնութեան թուականն ՎերնիԱՄՈՒԹԻՒՆ է : Այդ տարին Օրուանեան Սրբազնի ջանքերով ու մի քանի բարեսէր տիկնանց ձեռներէցութեամբ հանգանակութիւն մը կատարուեցաւ որուն արդիւնքով մի քիչ ընդարձակուած վերաշնուրեցաւ Որբանոցին շնչնք , և Քրիստինէ Մայրապետ Փափակեան իսկապէս անձնուէր կին մը , յօժարակամ ստանձնեց հաստառութեան Մայրութեան պաշտօնը :

Հետզհետէ իր շուրջը կը բոլորուին ու քող կ'առանեն երեք ուրիշ անձնագոճ քայրեր՝ ձեւացնելով ներքին



38671-67 Հ 2

152 653 - Կ . հ .


վարչութիւն մը , աւելի ձիշդը՝ կազմելով Գալֆաեան  
Որբանոց անուն ունեցող ընտանիքին երեց անդամները :

Տիկնանց խնամակալութեան վերին հակողութեան  
տակ , անոնք կ'աշխատին անընդհատ 18 տարի : Որբե-  
ռուն թիւը այս շրջանին կը բարձրանայ 50 ի , անոնց  
բարոյական ու նիւթական վիճակը կը բարելաւուի ,  
Որբանոցը կ'ունենայ Ազգ . նախակրթարանի գասըն-  
թացք մը , ու աշխատանոց մը ձեռագործի համար :  
Այս ամէնը միմիայն ժողովուրդէն առատաձեռնու ած  
նուէրներով , առանց ո'եւէ նշանակելի հաստատ եկա-  
մուտի : Պատերազմի նախօրեակին , տարեկան շուրջ  
1200 լիրայի պիւտածէ մը ունենալով հոնդերձ կը յա-  
ջողին շուրջ 2500 Օսմ . լիրայի պահեստ մըն ալ մէկդի  
դնել :

Պատերազմի շրջանին , ապրուստի տարօրինակ սղու-  
թիւնը , թղթադրամի և գրամական տակնուվրայութիւնը ,  
ՊԱՏԵՐՈՂՄԻ Հասարակութեան տագնապի օրե-  
ՏԸՐԻՆԵՐ բը , բոլորովին ցամքեցուցին մեր հա-  
սոյթի գլխաւոր ազբիւրը եղող նուիրա-  
տուութիւնները : Որբանոցի մատակարարութեան գործը  
կրնար անյուսօրէն խանգարիլ , եթէ ամէն կարնիլի խնա-  
յողութեան չի դիմէինք : Սահպուած՝ պակսեցուցինք  
պատսպարեալներու թիւը ու յաջողեցանք անցնել 5  
տարիներու դժնդակ շրջանը՝ անխախտ պահելով հաս-  
տատութիւնը , սպառելով սակայն պահեստի գումարին  
կարեւոր մէկ մասը :

Անուրանալի է որ պատերազմի այս շրջանին Որ-  
բանոցի վարիչ քոյրերը անփնահատելի յատկութիւններ  
ի յայտ ըերին ու կրցան բացառիկ ջանքերով միջոցներ  
ստեղծել ու այդ միջոցներուն լաւագոյն գործածութիւ-  
թիւնը ապահովել :

Հանրութեան ներկայացնելով իրենց գործունէու-



թեան այս կարեւոր պարագան , ինամակալութիւնս վարիչ քոյրերուն հրապարակաւ իր գոհունակութիւնը և չնորհակալութիւնը յայտնել պարոք կը համարի :

Ստորեւ զատ զլիսի տակ կը ներկայացնենք , անցեալ վեց տարիներու հաստակարարութեան հաշիւք՝ ինչպէս նաև Հաստատութեանս նախ քան պատերազմը և ի վերջ 1919 ի գոյից վիճակը :

Նիւթական գժուարութեան ու տագնապի այս չըրչանին իսկ , հաստատութիւնը հաւատարիմ իր աւան-

1919 ի գութեան , իր պարտուկանութիւնը կառը որբերը տարելու համար լայն բացաւ իր գըռները գաւառէն ծայր տուող որբերու անվերջ կարաւանին :

Անձնուէր Մօր մը ու քոյրերու ներկայութեամբը ստեղծուած հաստատութեանս իրեն յատուկ ընտանեկան-բարոյական մթնոլորտը՝ անահանձն գուրգուրանքի աղբիւր մըն էր համոզ թշուառները միմիթարելու ու անոնց պակսող մայրական իննամքը շռայլելու . անոնց նիւթականը հոգալու համար ստկայն վստահ էինք միմիայն հասարակութեան ամէն խուերուն մէջ մեր ունեցած համակիրներու առատաձեռնութեան :

Ուրախ ենք ըսելու թէ մեր յուսերը ապարդին չի մնացին . ամերիկան նպաստը . Ազգ . ինամատարու-

թեան օժանդակութիւնը , բարդեւ 1919 ի լով ամեատական նուէրներէ մեր ստացած հասոյթին վրայ , կրցինք 1919 տարւոյ մէջ լիովին կատարել մեր պարտականութիւնը՝ գրեթէ անընդհատ իննամելով 85ի չափ որբեր ու տարին փակեցինք հասոյթից առաւելութեամբ մը՝ որ գոցեց պատճեազմի տարիներուն սեր պիտածէին բացը՝ և նոյնիսկ կրցինք փոքր գումար մըն ալ նորէն պահեստի տանիլ :

Քաջալերուած ձեռք բերուած այս արդիւնքէն կը փութանք հանրութեան ներկայացնել Որբանոցիս մատակարարութեան ներկայ համարատաւութիւնը՝ հաստատութեան հանդէպ իր ցոյց տուած վստահութեան և համալրանքին փոխարէն։ Աւ հոս կ'օւզենք անդամ մըն ալ կրկնել մեր սրտադին չնորհակալութիւնները ամէն անոնց անխտիր՝ որոնք իրենց ցաւի կամ ուրախութեան, սուգի կամ տօնական օրերուն չեն մոռնոր օգնել մեր հաստատութեան։

Եյնամակալութիւնս նուե իրեն պարտք կը համարի, ներկայ առթիւ, իր խորին չնորհակալութիւնը յայտնելու Ամերիկեան Միսիոնարութեան (Mission of the

Ա. Բիթի Ամերիկայի Պատրիարքի ցուցիչ Mr. Peel ի, որ ոչ միայն պատերազմի վերջին Յ տարիներուն Որբանոցիս կարեւոր նիւթական օժանդակութիւն մը անպակաս ըրտւ, այլ նաև նոյն տարիներու ընթացքին իրենց կողմէ Խասութիւնի մէջ հաստատուած ձրի խոհանոցը կազմակերպելու հոգը ու մատակարարութիւնը Որբանոցիս ժրաշան քայլերուն յանձնելով՝ անոնց վրայ իր ոնեցած վստահութեան ու իրենց կատարած գործը գնահատելուն մէկ ապացույցը տուաւ։

1919 Յուլիս 12ին դժբաղութիւնը ունեցանք կորսունցնելու Որբանոցի Մայր՝ Քրիստինէ Մայրապետ Փափառի Սրբածութեան մարդու այս հաստատութեան, կը վարէր զայն ճշշմարիս մօր մը պէս։ 1919 Յուլիս 28ին պատրիարքական կոնդակով Որբանոցի մայրութեան պաշտօնը յանձնուեցաւ քոյլ Աղաւնի Քէօէսեանի, որ իր կրտսերին՝ քոյլ Մարիամի հետ՝ աջ բազու կը եղած էր հանդուցեալ Մայրապետին։ Հաստատութեանս հանդէպ իր ունեցած

սիրով ու ցայց տաւած կարողութիւններով , Այսոր  
Ազաւնի կոչուած է նոր և արդիւնաւոր շրջան մը եւս  
բոլորել տուլ Որբանոցին :

Ստորեւ կը տեսնափ , հաստատութեանս վերջի տա-  
րիներու ներքին կեանքէն քազուած իր տեղեկագիրը :

Ինչ որ սակայն ինամակալութեանս մտահօգութեան  
պատճառ եղած է , Որբանոցի ներկայ շէնքին անբաւա-

կանութեան հետեւանքով յառաջ ե-  
թորի Շէնքին կոծ խճողումն է : Արդարեւ ՅՈ որբի

Անբայիլիլու Վիձնիլի համար ննջարան դասարան , աշխա-  
տանոց ու զբոսարան մը պարտնակելու յարժար մեր  
շէնքը , այժմ զբեթէ կրկին թիւով պատսպարեալ ունե-  
նալու հարկադրուած՝ չափազանց նեղ դարձած է և ան-  
հրաժեշտ պէտք ունինք անջատ շէնքի մը մէջ ամփո-  
փելու մեր 4—5 դասարանները ու ձեռագործի աշխա-  
տանոցը՝ որովհետեւ պէտք է նկատի ունենալ որ Որ-  
բանոցս հաւասարապէս տուն , դպրոց և աշխատանոց  
մ'է իր պատսպարած սանուհիներուն համար :


1914ի սկիզբը հանդուցեալ Աբրահամ փաշա Ե-  
րամեանի նուրիածառութեամբ , Որբանոցս տէր դարձաւ

իր պարտէզին կից՝ որմնափակ և ըն-  
անջնօտիլաց՝ դարձակ հողի մը , որ ամէն կերպով  
ԴԱՍԱՐԱՆԻ ՄԸ յարմար է իր մէջ ունենալու մեր  
ԾՐԱԳԻՐԻ :

Ասով պիտի կրնանք ոչ միայն բարելաւել մեր պաշտ-  
պանեալներուն վիճակը , հապա նաեւ տւելցնել անոնց  
թիւը :

Մեր այս մտադրութիւնը նոյն իսկ պատերազմէն  
առաջ գործադրութեան դնելու փափաքող էինք , և  
ձեռնարկած էինք շինութեան համար գումար մը հա-  
ւաքելու :

Այդ նպատակին յատկացնելու համար ունեցանք



1000 Օսմ. Լիրայի նուիրատուութիւնը մը : Տիկնալք՝ Օհան Պաղտատեանի, ձանըմեանի, Ծէիդեանի և Բրօթօրօրօֆի կումանէ : Դժբազգաբար շինութեան յատկացուած այդ գումարը դրամատան մէջ պատրաստ դրամ պահելու ստիպուած ըլլալով , այժմ թղթագրամի վերածուած կը կտնենք :

Անկէ յետոյ , ուրախ ենք ըսելուոր հաստատութեանո վիճակով մօտէն հետաքրքրուող երկու անձինք՝ Տեարք Արշակ Գարակէօղեան և Տիգրան Բարագամեան հաղարսկան լիրա թղթագրամ նուիրեցին այս ֆօնտին , որով այժմ 3000 լիրայի կը համնի այս գումարը :

Որքան որ շինութեանց ներկայ սղութիւնը մեզ համար քաջալերիչ չէ և չենք ուզեր անմիջապէս գործի ձեռնարկել , սակայն սոյն վեցամեայ տես կոջ ՄՌ զեկատուութեան հրատարակութենէն կ'ու զենք օգտուիլ ու կը գիտենք հանրութեան որ օգնէ մեզ , պատրաստ ըլլալու , որպէսզի կարենանք առաջին յարմար առթիւ այս չէսքին կառուցման ձեռնարկել :

Որքան ալ համեստ ըլլան եղած նուէրները այս նպատակին համար , սիրով պիտի ընդունուին անոնք :

Գալֆաեան Ազգ . Որքանոցը իր բարոյական մաքուր մթնոլորտով և աւանդութիւններով որուն կը վկայեն ամէն այցելու և մեզմով հետաքրքրուող նոյն խոկ օտարազգիներ , կ'արժէ որ նիւթական աւելի հաստատ կռուանի մը վրայ դրուի , որով միայն կարելի պիտի ըլլայ տուաւելագոյն թուով որբու հինեւ պատըսպարել :


Մեր հաստատութիւնը միակն է մեր որբանոցներուն մէջ որ յիսուն տարուան կեանք մը ունեցած է , մինակն է որ ուխտեալ քոյրերու խնամքով կը կառավարուի և ձգմարիտ ընտանեկան բոյն մ'է :

Օգնեցէք մեզի որ լոյն բանանք մեր դռները ու կարենանք աւելի խոչըր թիւով հայ որբուհիներու գլուխը հանգչեցնել իրական մօր մը ու քոյրերու գիրկը : Ի գիմաց Տիկնանց Խնամ , Գալֆաեան Ազգ Որբանոցի

Կ. Պոլիս  
Անգեմը. 1920

Ա. Տալինեան Ա. Ն. Գարուկիօգեան

Ծան . — «Շինուրեմե Ֆոն»ի համար լիլալի նուիրները սկսէ կ դրկել առ՝ Տիկն Վ. ԳԱՐԱԿԻԶՉԵՆԵԱՆ  
Սարզիլ: Խան, Պոլիս



# ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐՈՒ

## ՏՊԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաստատութեանս այցելուներու տոմարէն հանոյնով բարզմանարար կը  
ներկայացնենք Առուել, Ամերիկեան Միհիօնարական Մարմանն  
ու. Պուստ Տուրէն Մր. Քիրի Վկայութիւնը ինչպէս նաև Ամե-  
րիկեան Կապատառույց Ցանձնաժողովին Արանցներու նիւդին  
նախագահի՝ Միհիս Հայզրի սպասութիւններ:

Շատ ուրախ եմ իմ վկայութիւնս ալ աւելցնելու  
այն գործին, զոր ես ճշմարտապէս զմալելի կը նկա-  
տեմ, և որ կը կատարուի Խասդիւղի Գալֆաեան որ-  
բանոցի հոգատար քոյրերուն կողմէ:

Յաճախակի այցելութիւններ տուած եմ այդ հառ-  
տատութեան և զայն լաւ կառավարուած գոտած եմ:  
Պղտիկները երջանիկ կ'երեւին միշտ, լաւ մնած, և հո-  
գածութեամբ խնամուած: Հաստատութիւն մըն է ուր  
միշտ կ'երթամ այն գոհունակութեամբ թէ առիթը ու-  
նեցած եմ օգտակար ըլլալու իր արդիւնաշատ դերին  
մէջ: Քանի մը տարի առաջ այս որբանոցին օժանդա-  
կութիւնը վայելեցի ազքատներու կերակուր բաժնելու  
գործին մէջ, որբանոցին մէջ իսկ հաստատուած խոհա-  
նոցի մը միջոցաւ, ուր կերակուր կը պատրաստուէր և  
դուրսը կը բաժնուէր ստուարաթիւ կարօտեալներու  
ի Խասդիւղ:

Աշխատութիւնը լաւ կը կատարուէր, հաշիւները  
գոհացուցիչ կերպով գլուխ կ'ելէին և գործը ամէն  
կերպով պատուարեր էր հաստատութեան, և վստահ  
եմ մեծ բարիք պարզեւեց ժողովուրդին:

Որբանոցին հոգք ստանձնող քոյրերը ջերմեռանդ և  
նուիրուած աշխատողներ կը թուին, որոնց ամբողջ  
մտասեւեռումը կեանքի մէջ բարիք ընելու մէջ կը կո-  
յանայ:

Ուրախ եմ այս վկայութիւնը տալու այն գործին,  
զոր ես արժանաւոր ձեռնարկ մը կը նկատեմ:

Չերք ոնկեղծօրէն

8 Յունիս 1920

Ա. Ա. Բիթ


Կ. Պոլիս վերագրածայ զինագագարէն քիչ վերջը,  
և անկից մինչեւ հիմայ, իբր նախագահ Մօտաւոր Արե-  
ւելքի նպաստամատոյց Մարմնի Որբախնամ Գօմիթէին,  
ձշգրիտ տեղեկութիւն մը ունեցայ իրենց որբախնամ  
գործի մասին:

Կատարելապէս վստահ եմ որ, ո և է որբանոցի  
վերաքննիչ պիտի ըսէր թէ Գալֆական որբանոցը քա-  
զաքին մէջ լաւագոյնն է:

Անգամ մը թուրք վերաքննիչ մը առի հետո՝ քա-  
ղաքին բոլոր որբանոցները աշքէ անցնելու համար:  
Երբ կարգը անոր եկաւ, սապէս խորհրդածեց. «Մեր  
(թուրք) որբանոցները բոլոր միւսներէն լաւագոյն են,  
բայց այս մէկ հատէն առակաւին սորվելիք ունինք: Այս  
քոյրերը չատ բան կրնան դաս առա մեղի: Այս որբա-  
նոցը մերիններուն չափ — եթէ ոչ քիչ մը աւելի —  
լաւ հաստատութիւն մ'է, որ չատ աւելի պակաս ծախ-  
քով կը քալէ:»

Անձնապէս ինչ որ ամէնէն աւելի զիս տպաւորից  
այս հաստատութեան մէջ, տեղւոյն ընտանեկան մթնո-  
լորան է:

Լուսաւորչական այս քոյրերը՝ մայրերու գիրք



ստանձնած են և եղբայրակցութեան զգացումը կը զօրացնեն աղջիկներուն մէջ։ Որբանոցը բազմոթիւ ընտանիքով տունի մը կը նմանի ուր ամէնքը կ'զգան թէ իրարու կը պատկանին, և կ'աշխատին միասին, բոլոր անդամներու փոխադարձ բարօրութեան համար։

Աղջիկները կը սորվին գործնական և խնայառէր ըլլալ։ Ես միայն կը փափաքէի որ ամէն հայ որբուհի կարենար ընդունիլ այն խնամքը ու դաստիարակութիւնը որ կ'ընծայուի այս հաստատութեան մէջ։

Կ'աշխատին ընդարձակել այս հաստատութիւնը և շատ պիտի սիրէի զայն ընդարձակուած տեսնել, որպէսզի աւելի թուով մանուկներ կարենային անոնց խնամքին ներքեւ ըլլալ։ Տասը հազար ոսկիի պէտք մը ունին որուն երեք հազարը հանգանակուած է արդէն։


Մեծապէս կը հիանամ այս կուսաւորչական քոյրերուն վրայ և կ'ուզեմ անոնց ներկայացնել իմ սրտագին շնորհաւորութիւններո՛ ինչպէս նաեւ «Աստուծոյ պահպանութիւնը» իրենց բարի գործին համար։

Յարդանօք

24 Յունիս 1920

ի. թ. ՀԱՅՐԵՆԻ

Նիսք. Մօս. Արեւլի. Ամեր. Նպասի  
Որբախնամ Մարմելին



## ՊԵՏԱՄՆԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՒՔ

ՄԱՅՐ Ա.Վ.Ա.Խ.ՆԻ ՔԷՅՈՍԽԵԱՆԻ

(1914—1919)

Որբանոցիս հիմնարկութեան տարեղարձին, իւրաքանչիւր տարւոյ նոյ. 21ի յաջորդող կիւրակէին, ոռվորութիւն էր հրապարակային համարատութիւն մը ընել որբանոցիս մատակարարութեան և ներքին վիճակին վրայ: Վերջին վեց դժբախտ տարիներու ընթացքին, այդ պարտականութիւնը կատարելու առիթը չունեցանք: Այօր, անդրագաւանալով այդ շրջանին վրայ և տեսնելով մեր խնամոց յանձնուած հաստատութեանս այդ օրերէն անվտանգ դուրս գալը, որտեղ կատարեալ գոհունակութեամբ կուգամ ներկայ հրապարակային տեղեկատուութիւնը ընել:

Նախ և առաջ խորին ցաւով պէտք է յիշատակեմ Որբանոցիս նախորդ՝ մօր՝ Մայր Քրիստինէ Փափազեանի մահը, որ տեղի ունեցաւ 1919 Յուլիս ՄԱՅՐ ՔՐԻՍՏԻՆԻ 12ին: Իր կեանքի վերջին երկու երեք ՄԱՅՐ տարիները գրեթէ միշտ հիւանդ՝ իրեն համար ալ դժուարացած էր զրազուիլ Որբանոցին ընթացիկ գործերով: Խնամեցինք վինքը ծամարիտ մօր մը պէս: Իր անձնութրութիւնը, իր ազնիւ բնաւորութիւնը, մեզ՝ իր գործակիցներուն և բոլոր որբուհիներուն սիրելի դարձուցած էին զինքը: Տասն և եօթը տարի իր գեղեցիկ օրինակովը խրախուսած է մեզ: Իր մարմինը ամփոփուեցաւ Որբանոցիս մատրան պարտէզին մէջ, ինչպէս որ հանգուցեալին և մեր փափաքն էր: Օրհնեալ ըլլայ իր յիշատակը:

Այսպէս ի նշան երախտագիտութեան Քոյր Մարիամ  
Քէօսէեան պատրաստեց Մ. Բիթի մեծագիր իւղաներկ  
դիմանկարը զոր նուիրեցինք իրեն 1918ի Քրիսմսի:

1914—1919 վեցամեայ շրջանին կանոնաւորաբար  
կրցինք գանձել ամսական 1500  
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՂՐԱՄԱՆ:


Եկամուտի նոր գլուխ մը կրցինք ստեղծել, վէսի-  
քայով գնուած ասպրանքները, խնայողութեամբ գործա-  
ծելով և աւելցած նպաստաւոր գնով մը ծախելով:

1917—1919 երեք տարուան ընթացքին այս գլխէն  
ԲՈՅՈՒԹԻԿ 1052,26 Լ.Օ.ի հասոյթ մը ունեցանք որ բացա-  
ՀԱՌԱՅԹՆԵՐ ԱՒԿ հասոյթ անուան տակ կ'երեւի մեր հա-  
շիւներուն մէջ:

1918ին Տկն. Պիտոսս ձէվաճիրձեանի մահու ամբ  
տէր գարձանք ի Պալաթ. իր մեզ կոսակած տանը, որուն  
ՏԿ. Պ. ձէվաճիրձեանի խարիսուլ վիճակին պատճառու-  
է 8 Ա. Կ Բ. մարք՝ 550 ոսկի, ոտիսպուեցանք  
գործածել մեր պիւտածէն հաւասարակշռելու սէտքին:  
Այդ նուիրատու Տիկնոջ յիշատակին, ամէն տարի իր  
մահուան տարեգարձին, հոգեհանգստեան պաշտօն կը կա-  
տարենք որբանոցին մատրան մէջ:

Որբանոցիս կից համագ. Աբրահամ փաշայէ նուիր-  
ուած տունը, որ զինուորական զրաւման հետեւանքով  
կիսովին փացած էր, իրր հեզազ վաճա-  
ռը ԱՌԱՅԹԻԿ ԿԻՑ ոնցինք 1916ին, գանձելով 150 Լ. Օ.:

ՊԱՐՏԵԶ. Դժբախտաբար յաջորդ տարիներուն չի  
կրցինք օգտուիլ մեր այս կալուածին բնգարձակ հողե-  
րէն. Նոյն տարին խակ համակապաց շէնք մը գրաւելով  
թրքերն տղայոց վարժարան մը բացին ու մեր սեպհա-  
կան հողն ալ իւրացնելով դպրոցին զրօսավայրի վի-  
րածեցին: Շուրջ երեք տարի այս բռնագրաւումը ու



անախորժ գրացնութիւնը տանելէ յիսոյ , Համաձայնական իշխանութեանց Պոլիս մուտքէն քէչ վերջ , 1919 Մարտին կրկին աէր գարձանք սոյն պարտէզին :

1919 տարւոյ մեր մատակարարութեան հաշւոյն մէջ երեւցած նորոգութիւն գլխուն տակ նշանակուած 268,46 լ. 0 . գումարին մեծ մասը կը ներկայացնէ այս պարտէզը յարդարելով և շրջապատը նորոգելով բանջարանոցի վերածելու ծախքը : Այժմ այս պարտէզէն կը հայթայիթուի Որբանոցիտ մէջ սպառած թարմ բանջարեղէնի գրեթէ ամբողջութիւնը :

Պատերազմի սկիզբը , ինչպէս յիշեցինք ,  
Հին իննայողութեան համար ջանացինք նաեւ  
ՈՌՅՈՒՇԻՆԵՐԸ սանուհիներու թիւը , որ այդ  
թուականին 60ի մօտ էր: Ատանցմէ տանեակ մը յանձնուեցան իրենց պարագաներուն կամ յարմար ընտանիքներու ,  
որից երկուք ալ որգեգրութեան տրուեցան : Յետագայ 916—918 տարիներուն ալ շրջանաւորս սանուհիներէն 8ը իրր մանկապարտիզպանուհի կամ այլ պաշտօնով որբանոցէն մեխինեցան : 1915էն 1919ը Որբանոցս ընդ տմէնը 12 շրջանաւորս տուած է :


Այլ սակայն 1916էն սկսեալ ստիպուեցանք Որբանոց ընդունիլ , գաւառի նահատակ ժողովրդեան բեկոր ներէն ցանցառ կերպով Պոլիս ապաստանու նոր նոր նոր կամ Պոլիս բերուած ու թուրք տու Որբանուհիները ներէ խոյս տուող աղջնակներ : Զինագագարէն յիսոյ , Ազգ . Խնամատարութեան հետ մասնաւոր կարգադրութեամբ , այս նոր սանուհիներու թիւը բարձրացաւ 45ի , որոց համար Խնամատարութիւնը կը վճարէ այժմ՝ խրաբանչիրին ամսական 5 լ. 0 . թէեւ մեր ծախուց գումարը որբ գլուխ 1919 տարւոյն մէջ շուրջ 9 լիրայի իր հասնի : 1919ի վերջի կէսէն սկսեալ մեր սանուհիներու թիւը շարունակ 90ի մօտ եղած է :

38671 - 67

Դժբախտաբար սանուհեաց այս թիւը չափազանց  
իմառում յառաջ բերած է հաստատութեանս մէջ, ու  
որդին օձին ներկայ չի կարենալով մեր գասարաններէն  
նանջարանի համար տրամադրել,  
ԽՃՈՂԵԱԼ ՎԻՃՈՂԻ սախուած ենք փոքր ալջնակներէն  
շատեր զոյդ պառկեցնել մէկ անկողնի մէջ Յոյս ու-  
նինք որ մօտ ապագային պիտի ունենանք զատ գատա-  
րանի մեր չէնքը, որ ատեն պիտի կարենանք հանգիստ  
100է աւելի սաներ պատսպարել մեր տան մէջ :

Կրթական գործը տարիներու այս շրջանին՝ շատ ալ  
չի խանգարու եցաւ: Պ. Հմայեակ Շիշմանեան, ինչպէս  
միշտ վարեց ու կը վարէ ուսումնական  
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՐԻ բաժինը, որ եօթնամեայ ընթացքով նա-  
խակրթարանի մը ծրագիրը ունի: Ման-  
կապարանէզը, որուն հոգը տրուած է երեք շրջանաւարտ  
սահմունքներու, գոճացուցիչ վիճակի մէջ է: Դասա-  
ւանդութիւննք կը կատարուին մինչեւ կէս օր, յետ մի-  
ջօրէի պահերը ձեռական աշխատութեան յատկացուած  
ըլլալով՝ շարաթ օրերը սանունիք մաքրութեամբ և առ-  
տնին գործերով կ'զբաղին:

Արհեստանոցը՝ ուր սանուհիք կար և ձեւ ու ձեռագործ կը սովորին. դրափ համար ալ աշխատութիւններ կը կատարեն : Դժբախտաբար պատերազմի ԱՐՀԵՍՏԱՆՈՅՑԻ տարիներուն երբ Պոլսոյ մէջ գերձան կամ կտաւ գտնելլ բախտաւորութիւն մը կը ոեպուեր՝ աշխատանոցը երեսի վրայ մնացած էր, և 914—918 հինգ տարիներու ընթացքին ո և է հասցիթ չունենալի զատ նոյն իսկ սանուհեաց սովորական աշտատութիւն հայթայիտելու իսկ գեռաւարութիւն ունեցանք : Անցեալ տարւոյն մէջ սակայն, քոյր Մարիամ Քէօսէեան — որ Որբանոցին քարտողար համարակալը ըլլալէ զատ ձեռարուեսափ ճիւղին ալ տնօրէնութիւնը



ունի — վերստին կազմակերպեց նոյն ձիւղը և նոյն տարւոյն մէջ իսկ 250 ոսկւոյ չափ հասութ մը ձեռք բերուեցաւ :

Մատակարարութեան ելքի կողմը նշանակութեան արժանի բան մը չունինք յիշելու : Հանդերձեղէնի , ուշ լնդանուիր նԱխՈՒՅ 1915-18 տարիներուն աստիճանաբար գլուխութիւնը , բնականարար , աղծէքներու բարձրացման հետեւ անքանի է . իսկ 1919ի մեր ծախուց գումարը հասած է 7721,54 լիրայի . նախորդ տարուան 4160,38 գումարին հետ բազգատելով :

Այս տարբերութիւնը ոչ միան ապրուստի տղութեան և կարգ մը պակասած նիւթերու գնաման հետեւանքով , այլ մանաւանդ սանուհետց թիւին 25—30ի չափ տւենալին յառաջ եկած է :

1919ի մեր մատակարարութեան մէջ «Գոմակի գըլխուն տակ երեցած 138,91 լ. 0.ի վնասը , յառաջ եկած է մեր երկու կովերուն երկար ատեն հիւանդ մնալէ վերջ մեռնելէն : Մեր փոքրերուն համար խիստ կարեւոր կաթի սնունդէն զրկուած , շատ ուրախ պիտի ըլլայինք եթէ բարեսէր անձնաւորութիւն մը հոգար մեր այս պէտքը ու կաթնառու կով մը նուիրէր Հաստատութեանս :

Վեց տարուան այս շրջանին , հաստատութեանս առողջական վիճակը գոհացաւցիչ էր , և քոյր նէվրիկ Բասմանեան ընդ . հոկող և հիւսնակիցիներուի անդապահ իր բաժինը ունի այս սողոջական վիճակի արդիւնքին մէջ :

Սանուհերէն միայն երկու ման ունինք ողբաւու : Աւելի լայն առումով սակայն , մեր ընտանիքն ալ բազմաթիւ կորուստներ տուաւ տեղահանութեան տագնապին : Ետրավա , էնկիւրիւ . Պանտրմա պաշտօնավարդ կամ հարս գացած մեր հին սանուհերէն , որոնցինք

ոմանք համեստ ընտանիքներ իսկ կազմած էին ու Որբանոցին հետ իրենց կազմը չէին խղած՝ կորսուած են:

Որբանոցի ներքին կեանքին մէջ այդ գժուարին  
օրերուն, հոգեկան մեծ ափոփանք  
ՕՐԱՆՈՅԻՍ մը եղաւ Որբանոցին մասրան օ-  
ՄԱՏԲԱՆ 0701ԿՄԸ ձումը: 1918 Փետր. 14ին Տեա-

ռընդառաջի օրը Պատրիարքական Տեղապահ Գարբիէլ Արքեպիսկոպոս ձէվահիրճեան օծեց հաստատութեանս պարտէզին մէջ կառուցուած աղօթարանը, ուր թաղուած է հիմնադիր Սրբուհի Մայրապետ արտօնելով մեզ հնու պատարագ մատուցանել: Ասիկա կրկնապէս միխթարական եղաւ Խասգիւղի ժողովրդեան համար ալ, մանաւանդ որ այդ թուականներուն Ս. Ստեփաննոս եկեղեցին գրուուած և աւերուած, պաշտամոնքէ գուրքի մնացած էր: Այս առթիւ ձէվահիրճեան Սրբազնն մեզ ու որբանիներուն մխիթարութիւն մը ըլլարու համար եկեղեցական սպասարկութեան և ուրարկութեան աստիճան տուաւ Որբանոցին հանգուցեալ մօր և երեք քոյրերուն, որոնք նաև հաստատութեանս մէջ իրենց 16 տարուան աշխատութեան համար ալ օրուան Սահակ Կաթողիկոս-Պատրիարքին կողմէ լանջամաս կրելու արտօնութեամբ վարձատրուեցան:

Ուրախալի է նաև որ 1919 տարուոյ ընթացքին 5 ամսուհիներ ամուսնութեան արուած են:

Մեր երէց սանուհիներէն Օր. Սրբուհակ Խաչիկեան որ մի քանի տարբիներ սրբանոցին մէջ իրը ընծացեցու կը գործակցեր մեզ, իւր չերժ և տեւական փափաքին ՔՈՅՐ ԱՐԱՒԵԼԵԱԿԱՆ և ներքին վարչութեանս որոշման ԽԱՉԻԿԵԱՆԻ վրայ մայրապետական քօղ և օրհ-ՔՈՅՐԱՐԱՒԵԼԵԱԿԱՆ նութիւն ստացաւ հաստատութեանս հիմնարկութեան 1919 տարեղարձի օրը, Ամեն. Զաւէն Պատրիարքի կողմէ: Քրիս-

տինէ մայրապետի մահուընէ վերջ մեզի համար ուրամխութիւն մ'է տեսնել՝ Հաստատութեանս շուրջ թարմ ուժերու բոլորուիլը:

Ու հիմայ փակելէ առաջ տեղեկազիրա՝ կը մնայ ինձ ըսելու թէ որքան որ ալ մեծ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ըլլայ Որբանոցին նուիրողներուն ՀԱՍՏԱԿԱԿՈՒԹԵԱՆ թիւը որքան անձնուէր անոնց աշխատութիւնը, ինչ չափով որ ալ ըլլայ մեզ հասցուած օտար օգնութիւնները, մեր հաստատութեան միակ դրամագլուխը, միակ նեցուկը, հայ հասարակութիւնն է իր ամէն խաւերովը, որոնց մէջ հպարտ ենք ըսելու չատ մը համակիրներ ունինք:

Ոմանք կու գան անձամբ տեղեկանալ մեր վիճակին, այցելել մեր հաստատութիւնը խրախուսել մեզ:

Ուրիշներ՝ միշտ սիրալիր վերաբերամ մը ցոյց տուած են մեզի ամէն անգամ որ դիմած ենք իրենց ու կը շարունակին նպաստել մեր Հաստատութեան: Համեստութիւններ չի վիրաւորելու համար զանց կառնեմ հոս յիշատակել անոնք որ լայն չափերով օգնեցին ու կ'օգնեն մեզ: Արդէն մամուլը օրը օրին կը հրատարակէ անոնց անունը: Շնորհակալութիւններ ամէնուն:

Շնորհակալութիւն և Ազգ. մամուլին, որ ինքնայտարկ յօժար կը տրամադրէ իր սիրական ՄԱԿԱԿԱՆ նակները այս մարդասիրական ձեռնարկը հետաքրքրող առողերու հրատարակութեան և ի մասնաւորի օֆամանակից Պատ. խմբագրութեան, որ պատերազմի տեսողութեան հրատարակութիւնը միակ հայ օրաթերթը ըլլալով, նեղութեան մեր այդ օրերուն յաճախ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրեց Որբանոցին վրայ:

Որբանոցին ներքին վարչութիւնը որ իրեն միշտ նեցուկ և զօրավիզ ունեցած է Որբանոցին Տիկնանց

Խնամակալութիւնը , վստահ է թէ սլիսի շարունակէ վայելել այն թանկագին օժանդակութիւնը , և ասիկա պիտի ըլլայ մեծագոյն բաջակերութիւնը իր ջանքերուն մէջ :


Ու վստահ հայ Աղգին օժանդակութեան , մհնք սլիսի աշխատինք իմամակալութեան հսկողութեան տակ , շարունակել պահել այս վաղեմի հաստատութեան ներքին կարգուսարքը և արդիւնաւորել զայն ա՛յն ուղղութեամբ որով միայն յաջողած է բարգաւաճիլ հիմնադրին այս նուիրական գործը , այն է մայրական խնամք , մաքուր և համեստ կրթութիւն մը տալ Աղգին այն հէք զաւակներուն որոնք միեւնոյն գլուխստ ձականագրով իրարու միացած մեր յարկին տակ , կը կաղմնն ընտանիկուն խաղաղիկ բոյն մը :

Խաղիւղ

Յուլիս 1920

Ա. Պ. Ի. Ռ. Մ. Պ. Պ. Ե. Տ. Բ. Հ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

Մայր Դաշտակեան Ուրանոցի



Գ Ա Յ Ք

ԳԱԼՏԱԵԱՆ ԱԶԳ ՈՐԲԱՆՈՑԻ

Վիճակ 1 Յունիս 1914 ի

Կայունած. իրենց զնամենայ արժեքով	լ. 0.	լ. 0.
Արբանոցի չենքը	2000	
Դաւաթիա, Մուհամետ, թիւ 1 խանութ մը	250	—
Զիլիֆուար, Ֆիլեքօփիւսի	»	200
Դաւաթ-Դիւզ, Էլքրմէղ Թարլա, թիւ 24, տառ	200	—
Խասդիւզ, Սահամալէի փողոց, հող մը	30	—
Դարթաւ, հող մը	—	20
Խասդիւզ, Արբանոցին կից հող մը		
Յարդ մեր վճարած կարուածական և հ.		
Ճախակըրու գումարը	174. 06	2874.06

Կարսակի, Արբանոցի կարասեաց արժեքը	200	—
Արժեկրուպրե. 3 Արեւելան		
Երկաթուղթ պարտաթուղթ	23. 50	
11 Եղիպատր, Քրէտի ֆօնսիէ 4903ի	129. 20	
L 100, Սնամոլու Երկաթուղթոյ		
պարտաթուղթ Serie I	144. 76	
L 400, Հոնէն                  » II	443. 28	709.74
Գամ. Երկու կոլերու արժեքը	40	—
Գրամ. Ոնտուկի պատրաստը	0. 56	
թ. և հ. Գարակէօղեան գրամատան քոլ	1679. 37	1680.13
		5303.90

31 Դեկ. 1919

կ. պոլիս

Գանձապես

Ա. Ն. ԳԱՐԱԿԵՕՂԵԱՆ

# ԳՐԱՎԻՔ

## ԳՄԼՖԱԵԱՆ ԱԶԴ. ՈՐԲԱՆՈՑԻ

Վիճակ՝ 31 Դեկտ. 919 ի

	լ. 0.	լ. 0.
Կարուածք. իրենց գնահատեալ հիմ արժեկով	—	—
Որբանոցի շենքը	2000 —	
Ղալաթիա, Մօմանէ, թիւ 1, խանութ մը	250 —	
Զելիքտառար, Ֆիլքէօբրիւսի,	»	200 —
Խասդիւզ, Սանտալձի փողոց, հող մը	30 —	
Գարթաւ, հող մը	20 —	
Որբանոցին կից հող մը, որ մեզի արժած է դուռ	20 —	2320.00
<b>Որբանոցին կարասիաց արժեքը</b>	<b>340 —</b>	
<b>Արժեքային պարագաներն երկաթուղով</b>	<b>23.50</b>	
41 եղիպտական քրէտի զօնսիէ 1903	129.20	
L 400. Անասոլուի երկաթուղով	111.76	
պարագաների Տերակ 1	445.28	
L 400 նոյնէն	» II	
L 200 » III	198.22	907.96
<b>Գում. Մէկ կողին արժեքը</b>	<b>30 —</b>	
<b>Գրամ. Անտուկի պատրաստը</b>	<b>237.46</b>	
<b>Օսմ. Առ. Գրամատան քով</b>	<b>1502.93</b>	<b>4740.09</b>
	<b>3708.03</b>	

## ՇԻՆՈՒԹԵԱՆ ՖՈՆՏ

Պարտի	լ. 0.	Պահանջէ	լ. 0.
Յարդ այս մօնիխն նաևար	—	Օսմ. առեւտրական	
նաւաբուած 2000	2000	Գրամատունին	2000
	լ. 0. 2000		լ. 0. 2000

卷之二

卷之二

卷之二

卷之二

# ՄԱՍԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԵՊԱՄԵԱՅ ՅՈՒՅԱԿ ԳԱԼՅԱԼԵԱՆ ԱԶԳ. ԱՐԲԱՆՅԻ - ԽԱՅԻՔԻ,

1914—1918 ՏԱՐԻՆԵՐ, 1 ՑԱՆԿԻԱ - 31 ՊԵՂԺԱԾԻՆ

*ՄԻԱՏՎ.* —

	4944	4945	4946	4947	4948
Զամանակն նուելիներէ	300   29	133   70	336   01	458   76	2049   93
Զամանակն նիւթը էմիներէ	63   —	34   —	429   —	219   —	249   60
Զամանակն բացակի հասալիք:	—   —	—   —	—   —	249   99	264   44
Պետական նազարէ:	218   39	436   73	486   97	484   64	439   67
Պատրի Հանգ:	—   —	—   —	—   —	750   —	600   —
Պատրի Հանգի տաճանմաց բռակին:	417   42	130   44	220   24	390   63	628   90
Բաժապահնեայ տաճանմաց բռակին:	80   74	46   79	32   02	69   33	34   80
Բաժանադակութեալ:	30   —	40   —	40   —	40   —	30   —
Կառուածական վարձի:	2   74	48   56	26   17	35   59	71   27
Աշխատանիցի ձեռապործի արդիւնիւտ:	96   33	66   94	107   44	66   34	62   82
Տալրո եւ կրտնիւտ:	—   —	—   —	—   —	20   —	70   —
Բանցաւածանիցի հասալիք:	74   77	53   49	66   28	34   —	372   37
Գամ՝ աւտարուած կարին արդիւնիւտ:	121   63	262   02	45   89	394   74	—   —
Տարոյ բացը	1125   23	942   67	4210   02	2877   06	4600   47

*ՄԻԱՏՎ.* —

	4944	4945	4946	4947	4948
Մնունիի	460   17	498   83	744   04	1984   01	2816   37
Համիերձելենիի	98   86	32   29	75   19	306   02	221   58
Կառեամիիրի	79   10	31   54	87   85	252   23	536   83
Ուսուցիչի եւ Պատօնութիւն:	155   97	70   92	61   22	102   34	184   20
Գրենական պիտոնիի	11   27	4   19	7   72	20   03	39   42
Զ. ծախուց (Փոխադրութիւն, Գեղուաց եւ այլի):	174   97	79   43	83   56	I20   96	316   71
Կառուածական ծախուց (Տուրբ. ապահովագր. նուող)	(1) 93	27(2)188	79(2) 69	50(2) 54	36   95
Գոտի ծախուց	51   64	36   68	80   94	37   11	176   78
Տարոյ լաւելան	—   —	—   —	—   —	—   —	213   31
	1125   25	942   67	1210   02	2877   06	4600   47

1.— Կը ուստանակէ նաև, Որբանոցի ՀՀնդիւն և կարսեաց ապահովութիւնը եւ.

2. Այս տարիներուած մէջ վճարուած է լրուածին կցեալ հոլին գոլսանցման

ձակը ու յետնեալ տուրքերը.

**ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

1919 ՏԱՐԻԻ ԳԱԼԱՅԻՆ ԱՀՔ. ԱՐԵՎԱՅԻ - ԽԱՄԱԳԻՆ.

Զանազան հույր:	2864	48	Ալեքսանդրի	4089	43
» Ցիվիլէն նուեր:	1180	-	Համբականէի	1027	44
» Բացառիկի հասոր:	571	16	Առ Էլաֆինթի	933	54
Պետական հույր:	312	49	Ռ. Առ գիշէ և. պատօնութիւն	355	20
Պարզու հասով:	300	-	Գ. Ենական պիտոյի	45	73
Ամերիկան հոգասամուղցին	494	50	Զ. Ժախոց (Հոյսարցութիւն, Պե-		
Պաւազաման Ամսութեաց բաւակ:	625	56	Ջոայֆ Եւայն)	862	83
Բաժանուրդագրութիւն:	120	50	Կայսածական ծախոց (Տուր,		
Կազու ածական վարձի:	93	84	Կայանվագ, նորագ.)	268	46
Ամերասմինց ձեռագործի արդինքն	243	75	Գոյնի ճամփ	138	91
Տակու էւ կտոմի:	86	55	Տարան յանենալը	1265	09
Բանջարանցի հասոյ	51	80			
Ազգ. Խնամասաւորթիւն	2042	-			
			8986	63	
			8986	63	



